2019-Ը՝ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԱՍՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ



# «ԿՈՄԻՏԱՍԸ, ԻՆՉՊԻՍԻՆ ԵՂԵԼ Է»

*- Հայ ժողովուրդը կոմիտասյան երգին մեջ գտավ, ճանաչեց իր հոգին, իր հոգեկան ինքնությունը: Կոմիտաս վարդապետը սկիզբ է, որ վախճան չունի: Նա պիտի ապրի հայ ժողովրդով, հայ ժողովուրդը պիտի ապրի նրանով, ինչպես այսօր, այնպես էլ հավիտյան,- այսպես է արժեւորել մեծ կոմպոզիտորին Ամենայն Հայոց կաթողիկոս, երջանկահիշատակ Վազգեն Առաջինը:*

*Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում հատվածներ Խաչիկ Բադիկյանի «Կոմիտասը, ինչպիսին եղել է» գրքից*

Պոլսում, ընկերներով (Կոմիտասն ու Փանոս Թերլեմեզյանը) դեռ չէին հասցրել լրիվ դասավորել բնակարանը, երբ հնչեց դռան զանգը, Կոմիտասը, իր սովորության համաձայն, գերմաներենով ասաց. «Hereine» (մտեք), ներս մտան 4 գեղեցկադեմ երիտասարդներ՝ եվրոպական հագուստով: Նրանցից ամենահամարձակը՝ կոկիկ հագնված, ձյունաթույր օսլայած օձիքով, բարեկիրթ արտաքինով, փոքրիկ սեւ բեղերով, կողքի սանրված հարթ մազերով երիտասարդը Դանիել Վարուժանն էր, որն առաջինը մոտեցավ Կոմիտասին, գրկախառնվեցին: Կոմիտասը հյուրերին աթոռներ առաջարկեց եւ ներկայացրեց իր նկարիչ ընկերոջը, իսկ Վարուժանը՝ իր ընկերներին: Նախ նա ներկայացրեց գեղեցիկ արտաքինով, փոքրիկ, կարծես տուշով գծած բեղերով Գրիգոր Զոհրապին՝ նրան բնութագրելով այսպես.

- Ասիկա իր մեջ ներդաշնակորեն կպահե օրենսգետի եւ իրավաբանի, պետական ու հասարակական գործչի, հռետորի եւ հրապարակախոսի, նորարար գրողի եւ գրականագետի, ճարտարագետի եւ դասախոսի հազվագյուտ տաղանդն ու ընդունակությունները: Օսմանյան պառլամենտին մեջն ալ հայ ժողովրդին ընտրյալն է...

Վարուժանը պատրաստվում էր էլի գովեստի խոսքեր ասել ընկերոջ վերաբերյալ, երբ Կոմիտասը, ձեռք մեկնելով, ասաց.

- Հույն երիտասարդ շատ կսիրեմ. արժանապատվությունը բարձր գնահատող եւ ցածր մարդիկ արհամարհող մարդ է (խոսքը Զաբուղոնի մասին է):

- Իսկ երջանիկ մահը վա՞տ բան է,- Զոհրապին մոտեցավ Փանոսը՝ հարցն ուղղելով Կոմիտասին: Նա կարդացել էր նորավեպի տաղանդ Զոհրապի բոլոր գործերը եւ շատ էր ցանկանում տեսնել նրան. ահա եւ երջանիկ պահ:

Զոհրապն այնպես տպավորվեց երիտասարդ նկարչի սրտում, որ հենց Պոլսում էլ նկարեց նրան:

- Իսկ անիկա մեր քնարերգու Ռուբեն Սեւակն է,- թուխ դեմքով, վառվռուն աչքերով, փարթամ մազերով, բարալիկ, հաճելի բեղերով երիտասարդին մոտ բերելով՝ ծանոթացրեց Վարուժանը:

- Սակայն ասիկա ոչ միայն հոգիներ կազնվացնե, այլեւ կբուժի հիվանդ մարմինները...

- «Փոքրիկ աղջիկդ» էլ շատ կսիրեմ,- ասաց Կոմիտասն ու ձեռքը մեկնեց ավելի ամոթխած Ռուբեն Սեւակին:

- Ատոմ Յարճանյանի (Սիամանթո) ամենախորունկ վիշտը կարոտախտն է, սիրելի' Հայր սուրբ, անիկա ձեր նման մեկ համբույրի ու ցավի մեջ կմիացնե հարսերը՝ տնասեր, ու փեսաները՝ տարաշխարհիկ, մայրերը՝ հայրենապահ, եւ զավակները՝ նժդեհական, որոնց երգերը դուք շատ լավ գիտեք, սիրելի' վարդապետ, եւ նրանց երգերը բոլորին եք հասցնում:

- Երիտասարդի դեմքը՝ նկարից, գործերը գրքից գիտեմ. «Հարսին երազը» անզուգական է,- նկատեց Կոմիտասը:

Երբ հայ վեց տաղանդավոր մտավորականները բոլորել էին սեղանի շուրջը, Կոմիտասը մատուցեց իր ձեռքով եփած անուշաբույր սեւ սուրճը (միշտ ինքն էր պատրաստում եւ գրեթե իր բոլոր հյուրերին միշտ սուրճով ու մրգով էր հյուրասիրում): Ծայր առավ մտերմիկ խոսակցությունը...

### Ավետիք Իսահակյանի հուշերը Կոմիտասի մասին

Կոմիտասը ինձ ժամանակակից մարդ էր. «Եղբայր Սողոմոնը», ինչպես կոչում էինք նրան Գեւորգյան ճեմարանում, տարիներ ապրել ենք նույն հարկի տակ, խոսել, կատակել: Ճամփորդել ենք միասին հայ գյուղերն ու ուխտատեղիները (Սեւան, Հառիճ), ուր նա երգեր էր հավաքում: Եղել ենք միասին Եվրոպայում, Ստամբուլում, բայց այս ամենը թվում է ինձ ո'չ իրական: Կոմիտասն ինձ համար հիմա լեգենդ է, հեռավոր առասպել, եւ նրա կյանքն ու փառապանծ գործը մի չքնաղ հրաշապատում:

Կոմիտասը մեր ժողովրդի հպարտությունն է. նրա գործը՝ մեր ազգային անսպառ հարստությունը:

Ինչո՞վ է արժանացել նա մեր ժողովրդի այս բարձր գնահատանքին: Նա ո'չ օպերաներ է գրել, ո'չ օրատորիաներ, թերեւս մի քանի արիաներ կամ ռոմանսներ միայն: Բայց ավելի մեծ գործ է կատարել, քան այդ բոլորը: Նա հայտնագործել է մեր ազգային երգը, հայկական երաժշտությունը, ազգային մելոսը՝ ինքնուրույն, ինքնատիպ եւ անաղարտ: Նա հիմքն է դրել ազգային երաժշտական կուլտուրայի:

Մարդիկ կային, հայեր եւ օտարներ, որոնք պնդում էին, թե հայ ժողովուրդը ազգային երաժշտություն չունի, թե նրա երգը նմանողություն է եվրոպականին, թրքականին, քրդականին...

Կոմիտասն անխոնջ աշխատասիրությամբ, իր հանճարի ուժով, իր զարմանալի ինտուիցիայի շնորհիվ, նաեւ իր տեսական լուրջ պատրաստությամբ ապացուցեց հակառակը, ապացուցեց հայ երաժշտության ինքնուրույն գոյությունը՝ բխած հայ ժողովրդի հոգուց եւ դարերի միջով մեզ հասած: Նա դիմեց հայ երգի ակունքին՝ հայ շինականի, գեղջուկի, աշխատավորի երգին: Արարատյան դաշտի, Շիրակի, Վանի, Մուշի ժողովրդական երգերին: Նա ուզեց հայկական երկրի բնության մեջ, հայ գեղջուկի շրթունքներից լսել հայ եղանակներն ու երգի խոսքերը:

Նա խառնվեց այդ երգերը ստեղծող ժողովրդի հետ, ներձուլվեց նրա հետ. ներապրեց նրա երգերը եւ սրտով հասկացավ, որ հայ երգի ոճը թաքնված է ժողովրդի այդ երգերի մեջ, միայն պետք է մաքրել այդ երգերը օտարամուտ ժանգից ու անտեղի զարդերից, որոնք աղարտել էին հայ երգը: Եվ ցույց տվեց աշխարհին մեր ազգային երգը՝ մաքրած, ինքնուրույն եւ անաղարտ:

Կուլտուրական ժողովուրդները՝ ռուսները, ֆրանսիացիները, իտալացիները ընդունեցին հայ երաժշտության ինքնուրույնությունը եւ հիացմունքով տեսան մի նոր գեղեցկություն, մի նոր երգ, մի նոր համամարդկային հարստություն: Հիշում եմ մի գեղեցիկ օր: Էջմիածնում հյուր էի Կոմիտասի մոտ. նստել էինք նրա փոքրիկ պարտեզում, ստվերաշատ տանձենու տակ: Կոմիտասը նոր էր գտել «Մոկաց Միրզան» եւ մշակել էր այդ էպիկական հուժկու երգը: Շատ ոգեւորված եւ երջանիկ էր զգում իրեն այդ գյուտով: Կատարեց ինձ մոտ արվեստի բացարձակ կատարելությամբ: Ես հիացած էի եւ նույնպես երջանկացած: Դեռ մինչեւ այսօր ես հոգուս մեջ տեսնում եմ ոգեւորված Կոմիտասին եւ լսում նրա սրտաբուխ ձայնը: Կոմիտասը հրապուրել, հմայել էր ինձ:

- Այս երգը շատ հին է,- ասաց նա,- հեթանոսական դարերից, թերեւս: Տե'ս, ի՜նչ հզոր ձայներ կան, ի՜նչ խրոխտ շեշտեր: Մեր բարձր լեռներից, շառաչուն ջրերից, խոժոռ ժայռերից են ծագում առել: Մեր քաջ նահատակների հոգուց է բխել այս առնական երգը: Այնքա՜ն հին է նա, որ անշուշտ Ձենով Օհանը երգել է, Սասունցի Դավիթը լսել...

Եվ ուրախությունից փայլում էին նրա աչքերը: Մեր գյուղական ժողովրդից վերցրած երգը Կոմիտասը բյուրեղացրած վերադարձրեց նրան: Այդ երգը եկավ քաղաք, բարձրացավ բեմերի վրա, հաղթական հնչեց բոլոր հանդեսներում:

Ուր որ հայ կա, այնտեղ է եւ Կոմիտասի երգը: Նրա երգով մեր ժողովուրդն ավելի գիտակցաբար զգաց իրեն, ավելի կապվեց իրար հետ, ինքնաճանաչեց: Հայ հասարակությունը զգաց աշխատավոր ժողովրդի վիշտն ու հրճվանքը, նրա աշխատանքի պաֆոսը, նրա սերը դեպի իր հայրենի բնությունը:

Կոմիտասը հայ երգով լույս աշխարհ հանեց դարերի խավարի մեջ կեղեքված ժողովրդի խուլ բողոքն ու ցասումը բռնության, ստրկության դեմ. նրա խեղդված վիշտը, իրավազուրկ կյանքը եւ պայծառ ապագայի հանդեպ տածած հավատը...

*Պատրաստեց ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԾԵՐԵԹԵԼԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

*Մառնեուլիի մունիցիպալիտետի Ծերեթելիի հանրային դպրոցի հայկական բաժնում անցկացվեց Ամենայն Հայոց բանաստեղծի 150-ամյակին նվիրված միջոցառում: Աշակերտները մեծ ոգեւորությամբ էին պատրաստվել եւ կարողացան հմտորեն ներկայացնել գեղեցիկ հատվածներ Թումանյանի ստեղծագործություններից, կյանքից եւ կենսագրությունից:*




Այդ ամենը համեմվեց մեր աշակերտների գեղեցիկ եւ անզուգական երգ ու պարով: Ուսուցչուհի Ռոզա Ֆիդոյանը ջանք ու եռանդ չէր խնայել՝ ներկայացնելու Թումանյանի ամբողջ շնորհն ու տաղանդը: Բեմադրվել էին հատվածներ «Գիքորը» պատմվածքից, «Բարեկենդանը» եւ «Սուտասանը» հեքիաթներից:

Միջոցառմանը ներկա էին ուսուցչական կոլեկտիվը, աշակերտներն ու ծնողները: Երեխաների հետ բոլորն էլ մրմնջում էին Թումանյանի հայտնի խոսքերն ու բանաստեղծությունները:

Հետաքրքիր միջոցառումն ավարտվեց երկար ծափահարություններով ու տպավորություններով: Ներկաները գոհ էին եւ հիացած, իսկ դպրոցականները խոստովանեցին, որ բանաստեղծություն սովորելիս պետք է ուշադրություն դարձնել ամեն մի տողի, անգամ վերջին նախադասության վերջին բառի վրա:

Դպրոցի հայկական բաժնի ղեկավար պարոն Վանիկ Հարոսյանը նշեց, որ Մեծն բանաստեղծը հասանելի է բոլորին անկախ տարիքից: Նա մեր մեջ է, եւ համեստ դպրոցական միջոցառումը մեկ անգամ եւս ապացուցեց, որ Հովհաննես Թումանյանը կարողացել է գրավել բոլորիս սրտերը:

***ԼՈՒՍԻՆԵ ՌՈՒԲԻՆՅԱՆ***
***Մառնեուլիի մունիցիպալիտետի Ծերեթելիի հանրային դպրոցի հայկական բաժնի ֆիզիկայի ուսուցչուհի***

# ԿՈՄԻՏԱՍԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒՄ



*ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ ընթացիկ տարում անցկացվող հայ մշակույթի երեւելիների՝ Հովհաննես Թումանյանի եւ Կոմիտասի ծննդյան 150-ամյակներին նվիրված միջոցառումների շրջանակում, Վիրահայոց թեմի նախաձեռնությամբ եւ Վրաստանում ՀՀ դեսպանության ու Հարավային Կովկասի լատինական կաթոլիկների առաքելական վարչության աջակցությամբ, ապրիլի 25-ին, Թբիլիսիի Պողոս-Պետրոս հռոմեական կաթոլիկ եկեղեցում տեղի ունեցավ Կոմիտասին նվիրված երեկո:*

Երեկոն բացվեց Հարավային Կովկասի լատինական կաթոլիկների վարչության առաջնորդ, Գերաշնորհ Ջուզեպպե եպիսկոպոս Պազոտտոյի ողջույնի խոսքով:

Իր ելույթում Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը անդրադարձավ Կոմիտաս երեւույթին:

Երեւանի Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Մհեր Նավոյանը, Կոմիտասի կենսագրության եւ ստեղծագործական ճանապարհի խոր ու մանրակրկիտ վերլուծությամբ, ներկայացրեց հայ հանճարեղ երգահանի մարդկային ու ստեղծագործական դիմանկարը եւ նրա՝ ազգային ու համաշխարհային երգարվեստի պատմության մեջ ներդրած ավանդը:

Օրհնության խոսքով ներկաներին դիմեց նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Երեկոյի գեղարվեստական բաժնում, Կոմիտասի ստեղծագործությունների կատարումներով, իրենց մասնակցությունը բերեցին Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցու «Մակար Եկմալյան» երգչախումբը (խմբավար՝ Սվետլանա Տատոեւա), Վրաստանի Ավետարանչական-Մկրտական եկեղեցու «Քորալի» երգչախումբը (խմբավար՝ Ռամազ Կենուլարիա) եւ Մար Շիմմոնա Բար Սաբբաե Ասորիկ Քաղդեական կաթոլիկ եկեղեցու երգչախումբը (խմբավար՝ Իլոնա Բիլյանովա) եւ ուրիշներ:

Ավարտին, վիրահայ գեղանկարչուհի Մարինա Խաչատուրովան Երեւանի Կոմիտասի թանգարան-ինստիտուտին նվիրեց իր աշխատանքը:

***ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ***

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀԱԿԱՎԱՐԿԱՆԻՇ

## «ՓԱՐԻԶԸ» ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱ՞Ք



*Ընդհանրապես, հարցումներով որոշում են այս կամ այն ոլորտում լավագույնը: Հետաքրքիր է՝ հակավարկանիշային հարցադրումներ անցկացվո՞ւմ են, եւ եթե՝ այո, ապա՝ ի՞նչ հարցերով:*

***Բ.Ներկարարյան Մառնեուլի***

Այո, որքան էլ տարօրինակ լինի, նման հարցումներ էլ են անցկացվում: Մասնավորապես, հյուրանոցների եւ ավիատոմսերի որոնման Skyscanner առցանց ծառայությունը կազմել է զբոսաշրջիկներին հիասթափեցրած Եվրոպայի քաղաքների վարկանիշը:

Առաջին տեղում հայտնվել է Փարիզը: Հարցման մասնակիցների 29 տոկոսը խոստովանել են, որ Ֆրանսիայի մայրաքաղաքը չի արդարացրել իրենց սպասումները: Երկրորդ հորիզոնականը զբաղեցրել է Բեռլինը, որը հուսախաբ է արել հարցվածների 15 տոկոսին: Նրանց հաջորդում է Բարսելոնան, որը հիասթափեցրել է հարցման մասնակիցների 8 տոկոսին:

Նաեւ Եվրոպայի ամենագերագնահատված քաղաքների տասնյակում տեղ են գտել Հռոմը, Բրյուգեն, Պրահան, Ամստերդամը, Լիսաբոնը, Բուդապեշտը եւ Լոնդոնը: 2018 թվականի դեկտեմբերին ճանապարհորդները կազմել են աշխարհի այն տեսարժան վայրերի ցուցակը, ուր այցելությունները չեն արդարացրել իրենց սպասումները:

Պարզվել է, որ ամենից շատ զբոսաշրջիկները հիասթափված են իտալական քաղաքներից, այդ թվում՝ Վենետիկից: Երկրորդ տեղում հայտնվել է Եգիպտոսի էլ-Գիզա քաղաքը. զբոսաշրջիկները խոստովանել են, որ Մեծ բուրգն իրենց բավականաչափ վիթխարի չի թվացել:

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

## ԼՌՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ՏՈՆ



Աշխարհի ամենաանսովոր տոներից մեկը նշվում է Բալի կղզում, Ինդոնեզիայում: Դա Լռության օրն է: Այդ օրը չի աշխատում նույնիսկ կղզու միակ օդանավակայանը: Չի բացառվում, որ այդ օրը՝ նույնիսկ հյուրանոցից դուրս եկած զբոսաշրջիկներին, ոստիկանները խնդրեն վերադառնալ հյուրանոց:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## «ՀԱՐԳԵ'Ք ԵՐԵԽԱՅԻՆ...»

***Ընդամենը 4 ուսուցիչներ կարողացան ամբողջությամբ փոխել 20-րդ դարի կրթական համակարգը:***

Այդ ուսուցիչներից մեկն էլ իտալացի Մարիա Մոնտեսորին էր: Նա իր երկրում առաջին կինն էր, ով ստացավ դոկտորի կոչում: Իր ողջ կյանքը Մոնտեսորին անցկացրել է երեխաների հետ՝ մշակելով նրանց հետ աշխատելու յուրօրինակ մեթոդներ: Մոնտեսորին նաեւ թողել է նոթեր, որտեղ խորհուրդներ է տալիս ծնողներին: Եթե դուք տարին մեկ անգամ ընթերցեք այս խորհուրդները, ապա երեխայի հետ հարաբերությունները նկատելիորեն կբարելավվեն: Ձեր երեխան կլինի ավելի զարգացած ու նպատակասլաց: Ահա դրանք.

Երեխան սովորում է այն, ինչ շրջապատում է իրեն:

Եթե երեխային շատ քննադատեք, նա կսկսի ամենքին դատապարտել:

Եթե երեխային շատ գովեք, նա կսովորի գնահատել:

Եթե երեխայի մեջ սերմանեք ատելություն, նա կսովորի կռվել:

Եթե երեխայի հետ արդար լինեք, նա կվարժվի արդարությանը:

Եթե երեխային հաճախ ծաղրեք, նա կդառնա ամաչկոտ:

Եթե երեխան իրեն ապահով է զգում, սովորում է հավատալ:

Եթե երեխային շատ են խայտառակում, նա իրեն միշտ մեղավոր է զգում:

Եթե երեխայի բոլոր արարքները հավանության են արժանանում, նա չափից դուրս ինքնասիրահարված է դառնում:

Եթե երեխայի հանդեպ ներողամիտ եք լինում, նա սովորում է լինել համբերատար:

Երեխային հաճախ քաջալերելու դեպքում՝ նա սովորում է լինել ավելի ինքնավստահ:

Եթե երեխան ապրում է ընկերական միջավայրում եւ իրեն կարեւոր է զգում, նա այս աշխարհում միշտ սեր է գտնում:

Երեխայի մասին բացասաբար մի արտահայտվեք ո'չ իր ներկայությամբ, ո'չ էլ թաքուն:

Միշտ լսե'ք եւ պատասխանե'ք երեխային, երբ նա դիմում է ձեզ:

Հարգե'ք երեխային, եթե նա սխալ է անում, բայց նաեւ պատրաստ է կա'մ հիմա, կա'մ ավելի ուշ ուղղելու սխալը:

Միշտ պատրաստ եղեք օգնել փնտրտուքների մեջ գտնվող երեխային:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

## ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



*Համակարգչային կախվածության ախտանշանները.*

Բոլորին ծանոթ է կախվածություն հասկացողությունը, որը հանգեցնում է հետեւանքային մի շարք քայքայող իրավիճակների: Տարածված կախվածությունների շարքում են խաղամոլությունը, որը քայքայում է անհատի կյանքը, ընտանիքը, նպատակները, աշխատանքը, մասնագիտությունը, հարազատների հետ փոխհարաբերությունները, թմրամոլությունը, հարբեցողությունը եւ այլն:

Մեր ժամանակաշրջանում վնասակար եւ քայքայող կախվածություն կարող ենք համարել ինտերնետային եւ համակարգչային կախվածությունը: Մարդու ուղեղում հաճույքի կենտրոնի սիստեմատիկ խթանումը հանգեցնում է նրան, որ աստիճանաբար ձեւավորված վիրտուալ հիվանդությունը հեռացնում է անհատի պահանջներից այն ամենը, ինչ չի վերաբերում նրա նախընտրած զբաղմունքին՝ համակարգչին: Երեխաների դեպքում ամեն բան ավելի բարդ է: Կախվածությունն ավելի վառ է արտահայտված, իսկ առողջության վատթարացումը կրկնակի է կատարվում:

Փորձենք հասկանալ՝ որո՞նք են երեխայի դեպքում կախվածության ախտանշանները:

* Երեխան սահմանված ժամանակից ավելի շատ է տրամադրում համակարգչին եւ համակարգչային խաղերին:

* Հրաժարվում եւ չի կատարում թե' կենցաղային, թե' սեփական պարտականություններին կից աշխատանքները՝ հավաքել ննջասենյակը, դասավորել պահարանը, ճաշելուց հետո հավաքել սպասքը եւ այլն:

* Երեխան համակարգչի դիմաց նստելը գերադասում է ցանկացած շփումից, ընտանեկան տոնակատարություններից եւ հասակակիցների հետ խաղերից:

* Նույնիսկ ճաշելիս կամ լոգանքի ժամանակ նա ակտիվ է սոցիալական էջերում:

* Երբ անջատում եք համակարգիչը, նա ինտերնետն ակտիվացնում է բջջայինի միջոցով:

* Անընդհատ ինտերնետային կայքերում ձեռք է բերում նոր ընկերներ:

* Համակարգչի դիմաց անցկացրած ժամանակն աստիճանաբար սկսում է ազդել ուսուցման, ուսումնական առաջադիմության, կենտրոնացվածության վրա:

* Երբ բացակայում է ինտերնետային կապը, երեխաները կամա-ակամա դառնում են ավելի դյուրագրգիռ եւ ագրեսիվ:

* Երբ չկա ինտերնետային կապը, երեխան չի կարողանում մեկ այլ գործողություն կատարել:

Համակարգչային կախվածությունը երեխայի մոտ կարող է հանգեցնել հետեւյալ հնարավոր հոգեբանական եւ ֆիզիկական հապաղումների.

Երեխաներն ունեն շատ ավելի թույլ ֆիզիկական ու հոգեկան առողջություն, քան իրենց շրջապատող մեծահասակները: Համակարգչի ազդեցությունը կարող է շատ բացասական հետեւանքներ թողնել երեխայի վրա, եթե ծնողները պատշաճ ուշադրություն չդարձնեն այս խնդրին: Ինչո՞վ է համակարգչի չկարգավորված օգտագործումը վտանգավոր երեխայի համար:

Հոգեբանական ծանրաբեռնվածություն. ուշադրություն դարձրեք ձեր երեխայի վարքին, երբ նա ընկղմված է համակարգչի մեջ: Նա ոչ մեկին չի տեսնում եւ չի լսում, մոռանում է ամեն բան, գերլարված է եւ անհանգիստ: Այդ վիճակում երեխայի հոգեկանը գտնվում է ուժեղ ճնշման տակ:

Հոգեւոր վնաս. երեխան ծեփամածիկ է, որից կարելի է ծեփել ցանկացած տեսակի մարդ՝ համաձայն այն տեղեկատվական միջավայրի, որի մեջ նա գտնվում է: Այսօր տեղեկատվության ամենամեծ աղբյուրը համացանցն է, սակայն շատ հազվադեպ է պատահում, որ երեխան իր կամքով օգտագործի այն՝ ինքնակրթման, ընթերցանության, զարգացնող խաղերի նպատակով:

Որպես կանոն, երեխայի ուշադրությունը գրավում են տեղեկատվության այնպիսի տեսակները, որոնք նա չի կարող ստանալ ծնողներից: Անբարոյականությունը, որը հեշտ հասանելի է համացանցում, ամուր եւ խորը կարող է նստել երեխայի գիտակցության մեջ:

Համակարգիչը փոխարինում է ընթերցանությանը. վերջին տարիներին կտրուկ սկսել է նվազել գրագիտության աստիճանը: Երեխաների մտահորիզոնն աստիճանաբար նեղանում եւ սահմանափակվում է համակարգչային խաղերով, սոցիալական ցանցերով, ֆորումներով՝ իրական կյանքից դուրս թողնելով տեղեկատվության ամենավստահելի աղբյուրը՝ գիրքը: Երեխան դադարում է ինքնուրույն մտածել, որովհետեւ ամեն ինչի պատասխանը կարելի է գտնել համացանցում:

Կորչում է շփման կարիքը. իրական կյանքը մղվում է հետին պլան: Հարազատներն ու իրական ընկերները դառնում են պակաս անհրաժեշտ եւ կարեւոր, քան սոցիալական ցանցերի վիրտուալ ընկերները եւ նրանց գնահատականները: Համացանցում երեխան հերոս է, սակայն իրական կյանքում ունի շփման եւ առաջադիմության լուրջ խնդիրներ, դառնում է միայնակ եւ ինքնամփոփ:

Բոլոր բարոյական նորմերն աստիճանաբար կորցնում են իրենց նշանակությունը, եւ դրանց փոխարինման են գալիս համացանցային անպատժելիությունը, բոլոր տեսակի ցանկությունների եւ նպատակասլացության կորուստը: Իրավիճակը կարող է ավելի բարդանալ, եթե երեխան հայտնվի պոռնոգրաֆիկ, աղանդավորական, ազգայնամոլական կայքերի տեղեկատվության ազդեցության տակ:

Առաջանում են առողջական խնդիրներ. վատանում է տեսողությունը, երեխան դառնում է դյուրագրգիռ, հյուծված, ագրեսիվ, թուլանում է իմունիտետը, առաջանում են գլխացավեր, քնի խանգարում, գլխապտույտ, մկանային դող: Վզային հատվածի մշտական լարվածությունը թույլ չի տալիս, որ բավարար չափով թթվածին գնա ուղեղ, վնասվում է դեռ չամրացած ողնաշարը: Անընդհատ նստակյաց վիճակը հանգեցնում է ախորժակի կորստի, դանդաղում է աճը, եւ առաջանում են խնդիրներ՝ մարմնի զանգվածի հետ կապված:

Որպես կանոն, համակարգիչը շատ օգտակար կարող է լինել եւ օգնել երեխային ուսուցման մեջ, սակայն այն դեպքում, երբ այն կիրառվի որոշակի հստակ սահմանված ժամաքանակով եւ ծառայի նպատակին: Երեխան, բացի համակարգչից, պետք է տեղեկատվության աղբյուր համարի նաեւ գիրքը, գիտական ֆիլմերը, շրջակա միջավայրը, իսկ դա արդեն ծնողների դաստիարակության գերխնդիրն է:

## ԾԻԾԱՂԱՇԱՐԺ

☺ Միայն հայրիկը կարող է քնել միացրած հեռուստացույցի ձայների ներքո եւ արթնանալ, երբ դու հանկարծ փորձես անջատել այն:

☺ Ես շատ խստորեն որոշել եմ մոռանալ անցյալս, այդ իսկ պատճառով, եթե ես ձեզ փող եմ պարտք, ինձնից ձեռք քաշեք..

☺ Ուսուցիչ.

- Գծեք 2 սմ կողմով քառակուսի...

Աշակերտ.

- Էդ ո՞ր քառակուսին է, որ ունի ընդամենը մեկ կողմ:

☺ Մաթեմատիկոսի երեխան հարցնում է,- պապ, ինչպես գրեմ ութ: Հայրը պատասխանում է,- անվերջության նշանը պիտի կեսով պատի:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԴՈՒՔ ՀԱՂԹԵԼ ԵՔ, ԵՎ ԴՈՒՔ ՀԱՂԹԵԼՈՒ ԵՔ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հատուկ ուղերձով նա Հայաստանի բնակիչներին շնորհավորեց Քաղաքացու օրվա առթիվ.

- Սիրելի՛ ժողովուրդ, Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացիներ, շնորհավորում եմ բոլորիդ՝ Քաղաքացու օրվա առիթով:

Դուք հաղթել եք, եւ դուք հաղթելու եք: Դուխով:

Հիշեցնենք, որ, երկրի կառավարության կողմից ներկայացված «Տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը, շրջանառության առաջին իսկ օրից բուռն քննարկումների առիթ էր դարձել: Արդյունքում, երկարատեւ քննարկումներից հետո, նախագիծն օրենսդիրն ամբողջությամբ ընդունեց ապրիլի 9-ի նիստում:

Ապրիլի 19-ին, կառավարության որոշմամբ, Հայաստանի քաղաքացու օրվան նվիրված միջոցառումների անցկացման համար, հատկացվեց 124 մլն դրամ:

## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*Ապրիլի 30-ին, Երեւանում, Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների վարչապետների մասնակցությամբ, անցկացվեց Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի հերթական նիստը:*




ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի նիստին մասնակցելու համար, Հայաստան են ժամանել Ղրղզստանի Հանրապետության վարչապետ Մուհամեդկալի Աբիլգազիեւը, Բելառուսի Հանրապետության վարչապետ Սերգեյ Ռումասը, Ռուսաստանի Դաշնության վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը, Ղազախստանի Հանրապետության վարչապետ Ասքար Մամինը եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Եվրասիական տնտեսական միության խորհրդի հերթական նիստի օրակարգում ընդգրկված էր 13 հարց, որոնցից 8-ը քննարկվեցին նեղ կազմով հանդիպման ընթացքում:

Նիստի ընթացքում ԵԱՏՄ անդամ երկրների ներկայացուցիչները քննարկեցին ինտեգրացիոն գործընթացների զարգացմանը, Միության ամրապնդմանը, միասնական շուկաների ձեւավորմանը, համագործակցության ոլորտային ուղղությունների զարգացմանն առնչվող հարցեր, առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացմանը, կարծիքներ փոխանակեցին ԵԱՏՄ շրջանակում ինտերնետային առեւտրի զարգացման հեռանկարների շուրջ, հաստատեցին, արտատնտեսական գործունեության կարգավորման համակարգում, միասնական պատուհանի ազգային մեխանիզմի էտալոնային մոդելը:

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԿԱՆԽԱԳԾՎՈՒՄ Է 8 ՏՈԿՈՍԻ ՉԱՓՈՎ

*Հայաստանի տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Տիգրան Խաչատրյանը վստահ է, որ մշակող արդյունաբերությունն աճում է 8 տոկոսը գերազանցող տեմպերով: Դա գնալով ավելի մեծ ազդեցություն պետք է թողնի ընդհանուր տնտեսական արդյունքների վրա:*

- Տնտեսության կառուցվածքում ճշգրտումները մեկ օրում չեն լինում: Բայց կարեւոր է, որ դրանք շարունակվում են: Երեք ամիսների մշակող արդյունաբերության թվերը վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված չեն: Բայց մենք վստահ ենք, որ մշակող արդյունաբերությունն աճում է 8 տոկոսը գերազանցող տեմպերով: Մենք սպասում ենք, որ դա գնալով ավելի ու ավելի մեծ ազդեցություն պետք է թողնի ընդհանուր տնտեսական արդյունքների վրա,- ասաց նախարարը:

Նա նշեց, որ այս տարի շինարարությունը սկսել է կայունություն ցուցաբերել, որոշակի աճ կա 3 ամիսների արդյունքում: Խաչատրյանը նշեց նաեւ, որ գյուղատնտեսության արդյունքները լավ են, էապես ցածր չեն, քան նախորդ տարվա առաջին եռամսյակում: «Հայաստանում գյուղատնտեսությունը սեզոնային է, առաջին եռամսյակի ընթացքում դրսեւորված թվերը շատ էական նշանակություն չունեն տարվա արդյունքների տեսանկյունից»,- եզրափակեց նախարարը:

## ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԽՍՏԱՑՎԵԼ Է

*Մոտ ժամանակներում, Հայաստանում վարորդական վկայական ստանալու համար, երթեւեկության քննություններն անցկացվելու են ե՛ւ ավտոհրապարակում, ե՛ւ երթեւեկության իրական պայմաններում:*

Ինչպես նշեց ճանապարհային ոստիկանության պետի տեղակալ Արթուր Տոնոյանը՝ զուգահեռ փոխվելու են նաեւ որակավորման քննություն ընդունելու ժամանակահատվածները:

Նրա խոսքով՝ վարորդական վկայականի ստացման կարգը ավելի է խստացվելու: «Վարորդական վկայականների հետ կապված մի շարք աշխատանքներ են իրականացվում, ինչպես նաեւ՝ Հայաստանն ընդունել է պարտավորություն՝ համաձայն որի մինչեւ հունիսի 1-ը պետք է միանա Եվրոպական միության եւ Եվրասիական տնտեսական միության ճանապարհային քարտեզներին: Այդ ամենի արդյունքում մի շարք օրենքներում կիրականացվեն փոփոխություններ, մասնավորապես, որակավորման քննությունների ընդունման կարգի, վարորդական վկայականի արտաքին տեսքի եւ մի շարք այլ հարցերի հետ կապված»,- ընդգծեց ճՈ պետի տեղակալը:

Տոնոյանը շեշտեց, որ փոփոխություն լինելու է նաեւ C կատեգորիայի մասով:

«Ներկայիս տեխնոլոգիական հնարավորությունների պայմաններում քաղաքացուն A, B, C կատեգորիաների համար չէին պարտադրում ուսումնական գործընթաց անցնել, իսկ ներկայիս պահանջով պրոֆեսիոնալ՝ C կատեգորիայի վարորդները պետք է անցնեն կրթական պրոցեսներով»,- եզրափակեց ճՈ պետի տեղակալը:

## ԿԱՅԱՑԱՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ - ԴՄԻՏՐԻ ՄԵԴՎԵԴԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



*Ապրիլի 29-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ, Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին մասնակցելու համար, աշխատանքային այցով Երեւանում գտնվող Ռուսաստանի Դաշնության կառավարության ղեկավար Դմիտրի Մեդվեդեւի հետ: Հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկեցին հայ-ռուսական առեւտրատնտեսական համագործակցության եւ Եվրասիական տնտեսական միության շրջանակում ինտեգրացիոն փոխգործակցության արդիական հարցեր:*

## ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ 857 ՀԱԶԱՐ ԵՎՐՈ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ

*Եվրոպական միության, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ), Հայաստանի կառավարության եւ տարբեր շահագրգիռ խմբերի ներկայացուցիչներն ապրիլի 30-ին մասնակցեցին «ԵՄ-ն կլիմայի համար» ծրագրի մեկնարկային սեմինարին եւ քննարկեցին ծրագրի գերակայությունները եւ իրականացման համար անհրաժեշտ հաջորդ քայլերը:*

*Ծրագրի համաձայն, 2019-2022 թվականների համար նախատեսված՝ Հայաստանին հատկացվող ընդհանուր 857,000 եվրո ֆինանսավորմամբ, ծրագիրն աջակցելու է Փարիզի համաձայնագրով Ազգային մակարդակով սահմանված ներդրումների (ԱՄՍՆ) իրականացման պլանի եւ ճանապարհային քարտեզի մշակմանն ու կիրառմանը Հայաստանում: Այն նաեւ նպաստելու է ԵՄ կլիմայի օրենսդրության հետ համապատասխանեցմանը, ոլորտային քաղաքականություններում կլիմայի փոփոխության հարցերի ներառմանը՝ նպաստելով Հայաստանի ցածր ածխածնային զարգացմանը:*




## ԺԽՏՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՋԱՆՔԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ Է

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ապրիլի 24-ին նամակ էր հղել Պոլսո Հայոց Պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ Աթեշյանին: Նամակում Էրդողանն ընդգծել է, որ «հարգանքի տուրք է մատուցում Օսմանյան կայսրությունում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բարդ պայմաններում զոհված հայերի հիշատակին», միաժամանակ, հերթական անգամ, Օսմանյան կայսրության կողմից ծրագրված եւ իրականացված Հայոց ցեղասպանությանը զոհ գնացած 1.5 միլիոն հայերին համարել է «Առաջին համաշխարհային պատերազմի զոհեր»:*

Թուրքիայի ղեկավարի վերոնշյալ դիրքորոշումը իր հաստատումը գտավ նույն ապրիլի 24-ին՝ թուրքական արխիվներին նվիրված գիտաժողովի շրջանակում, նրա ելույթում, որտեղ Էրդողանը, անդրադառնալով Առաջին աշխարհամարտի տարիներին կատարվածին, հայտարարեց, թե հայերն են կոտորել մուսուլման կանանց եւ երեխաներին, ու նման պայմաններում «հայ հրոսակներին ու նրանց աջակիցների աքսորումն ամենատրամաբանական վարքագիծն է եղել»:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ապրիլի 24-ի ելույթն անվանել է Հայոց ցեղասպանության ժխտման նոր մակարդակ եւ «ազգի սպանդի արդարացում»: Հայաստանի ղեկավարը միջազգային հանրությանը կոչ արեց արձագանքել Թուրքիայի նախագահի ատելության խոսքին:

- Օսմանյան կայսրության ողջ հայ բնակչությանը, որը դատապարտվեց զանգվածային սպանդի ու մահվան երթերի, «հայ հրոսակներ ու նրանց աջակիցներ» անվանելը, 1.5 միլիոն մարդ սպանելն ու դա «ամենատրամաբանական վարքագիծ» որակելը ոչ միայն ժխտողականության նոր մակարդակ է, այլեւ՝ մի ողջ ազգի սպանդի արդարացում,- նշեց Նիկոլ Փաշինյանը եւ հավելեց. «Ամենից առաջ, ապրիլի 24-ին այդպիսի հայտարարությունը հայ ժողովրդի եւ ողջ մարդկության հանդեպ խորին վիրավորանք է եւ՝ ծայրահեղ ատելության խոսք անձամբ Էրդողանի կողմից: Աշխարհը պետք է չլռի»:

Թուրքիայի նախագահի վերոնշյալ ելույթին անդրադարձավ նաեւ Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը: Հատուկ տարածված հայտարարության մեջ, մասնավորապես, նշված է. «Ցեղասպանության զոհերի անվանարկումը՝ որպես «հայկական հրոսակախմբերի եւ նրանց կողմնակիցների» առավել վիրավորական է ու ցավալի: Օսմանյան կայսրության կողմից «վերաբնակեցման» քողի տակ ծրագրված եւ իրականացված Հայոց ցեղասպանության արդարացումը եւ ապա դրա՝ որպես «առավել ողջամիտ գործողություն» որակումն առանձնապես ցնցող է, սակայն միեւնույն ժամանակ այն վկայում է՝ Օսմանյան Թուրքիայում հայ ժողովրդին՝ որպես ազգային, էթնիկ եւ կրոնական խմբին ամբողջովին կամ մասնակիորեն ոչնչացնելու մտադրության մասին՝ համաձայն Ցեղասպանության հանցագործության կանխարգելման եւ պատժի մասին Կոնվենցիայի սահմանման»:

Ինչպես 1915 թ., այնպես էլ ավելի քան մեկ դար անց, Թուրքիայի ղեկավարությունը շարունակում է բացահայտորեն մարտահրավեր նետել միջազգային հանրային կարծիքին եւ պատմական իրականությանը: Թուրքիայի կողմից ցեղասպանության ժխտողականության եւ արդարացման քաղաքականությունը ոչ այլ ինչ է, քան առավել ծանր հանցագործությունների անպատժելիության դեմ պայքարի, հաշվետվողականության, հաշտեցման եւ ցեղասպանության կանխարգելման ջանքերի դեմ ուղղված գործողություն: Այն խոչընդոտում է միջազգային հանրության կարեւոր ջանքերը՝ կանխելու այնպիսի իրավիճակներ, որոնք կարող են հանգեցնել ցեղասպանության հանցագործությանը»,- ասված է Հայաստանի ԱԳ նախարարության հայտարարությունում:

CyanMagentaYellowBlack



ԱՎԱՆԴԱԿԱՆ

## 105-ՐԴ ՎԱՐԴԱՏՈՆԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՄԱՅԻՍԻ 19-ԻՆ



Վրաց եւ հայ ժողովուրդների դարավոր բարեկամության խորհրդանիշ Սայաթ-Նովային նվիրված Վարդատոնը այս տարի կկայանա մայիսի 19-ին:

Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, ժամը 10:30-ին կմատուցվի Սուրբ եւ Անմահ պատարագ: Այնուհետեւ եկեղեցու գավթում, ծաղիկներ կխոնարհվեն Սայաթ-Նովայի շիրմին: Ավարտին, ժամը 13:00-ին, հարակից՝ Վախթանգ Գորգասալիի հրապարակում, կկայանա Վարդատոնի ավանդական տոնախմբության բացման պաշտոնական արարողությունը, որին կհաջորդի գրական-գեղարվեստական մասը:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂՆԵՐԻ

## ՄԵԿՆԱՐԿԵՑ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

*Մայիսի 2-ին դպրոցներում սկսվեց առաջին դասարանցիների գրանցման երկրորդ փուլը, որը շարունակվելու է մինչեւ մայիսի 17-ը:*



Երկրորդ փուլում դպրոցում գրանցվել են այն երեխաները, որոնց քույրը կամ եղբայրը սովորում են նույն դպրոցում եւ նաեւ այն երեխաները, որոնց ծնողները նույն դպրոցի աշխատակիցներ են:

Գրանցման երկրորդ փուլում երեխային գրանցելու համար, ծնողը կամ երեխայի օրինական ներկայացուցիչը պետք է դիմի եւ ներկայացնի երեխայի փաստաթղթերը:

Առաջին դասարան մուտք գործելու իրավունք ունի այն երեխան, ում 6-ամյակը լրացած կլինի սեպտեմբերի 16-ին:

Գրանցման երրորդ փուլը դպրոցներում հնարավոր կլինի անցնել մայիսի 21-ից մինչեւ հունիսի 12-ը ներառյալ:

Կրթության նախարարության տեղեկությամբ, երկրի մասշտաբով, դպրոցներում, առաջին դասարանցիների համար, հաշվի է առնված 59 հազար տեղ:

ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2019

## ՕԹՈ ՆԵՄՍԱՁԵՆ ԵՎ ՍՐԲՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ




*«Եվրատեսիլ» 64-րդ միջազգային մրցույթը տեղի կունենա Իսրայելի ամենախոշոր քաղաքներից մեկում՝ Թել-Ավիվում: Երգի փառատոնին Վրաստանը կներկայացնի Օթո Նեմսաձեն, իսկ Հայաստանը՝ Սրբուհի Սարգսյանը:*

Իսրայելում մրցույթն անցկացվելու է երրորդ անգամ, 2018 թ.-ին երկրի հաղթանակից հետո՝ Նետա Բարզիլայի կողմից կատարված «Toy» երգով: Առաջին, երկրորդ կիսաեզրափակիչները եւ մրցույթի եզրափակիչ փուլը տեղի կունենան մայիսի 14-ին, 16-ին եւ 18-ին: Ընդհանուր առմամբ, «Եվրատեսիլ 2019»-ին կմասնակցեն 42 երկրներ:

Մասնակիցների ելույթների հաջորդականությունը ներկայացվել է վերջերս, դրանք հաստատվել են պրոդյուսերների կողմից: Նրանք շոու են անում, եւ նպատակն է՝ ստեղծել ամենահետաքրքիր հեռուստատեսային երաժշտական մրցույթը, մեկնաբանել են Eurovision.tv կայքում:

Օթո Նեմսաձեն ելույթ կունենա մայիսի 14-ին՝ առաջին կիսաեզրափակիչ համերգին: Նա կներկայանա կոմպոզիտոր Ռոման Գիորգաձեի «Քայլիր միայն առաջ» երգով՝ 11-րդ համարի ներքո: Այս երգը վրացերեն է:

Երկրորդ կիսաեզրափակիչը կբացի Հայաստանը՝ հանձինս Սրբուհի Սարգսյանի:

Հայաստանն այս երգի մրցույթին մասնակցում է 12-րդ անգամ: Այս 12 տարիների Հայաստանի լավագույն արդյունքը չորրորդ հորիզոնականն է, որը նա նվաճել է երկու անգամ՝ 2008 թվականին Սիրուշոյի «Քելե, Քելե» երգով եւ 2014 թվականին՝ Արամ Mp3-ի կատարմամբ «Not Alone» երգով:

Հայաստանը 2011 եւ 2018 թվականներին երկու անգամ չի կարողացել անցնել եզրափակիչ փուլ եւ մեկ անգամ հրաժարվել է մասնակցությունից՝ 2012 թ.-ին:

## ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔ ԴԱՄԱԼԱՅԻՑ



Մեծ կորուստ ապրեց հայ լրագրությունը, Դամալա գյուղի հասարակությունը, Դամալայի հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը՝ Տիգրան Ֆարմանյանի անժամանակ մահվան կապակցությամբ:

Երկարատեւ եւ ծանր հիվանդությունից հետո, 66-րդ տարում, կյանքից հեռացավ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի երկարամյա գլխավոր խմբագիր, Հայաստանի վաստակավոր լրագրող, Հայաստանի ժուռնալիստիկայում «Ոսկե գրիչ» մրցանակի դափնեկիր, Դամալայի միջնակարգ դպրոցի նախկին վաստակաշատ ուսուցիչներ Սիմոն եւ Մարիամ Ֆարմանյանների որդին՝ Տիգրան Ֆարմանյանը:

Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալա գյուղի հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, անդառնալի կորստի կապակցությամբ, խորին ցավակցություն է հայտնում Տիգրան Ֆարմանյանի կնոջը՝ Սուսաննա Ֆարմանյանին, որդուն՝ Սիմոն Ֆարմանյանին, դուստրերին՝ Սոնա եւ Մարիամ Ֆարմանյաններին, Դամալայի հանրային դպրոցի տարրական դասարանների դասվար եւ երաժշտության նախկին ուսուցչուհի Անահիտ Ֆարմանյանին, ռուսաց լեզվի ուսուցիչ Սերյոժա Սոֆոյանին, Իսկուհի Քերոբյանին, հարազատներին ու մերձավորներին: Տիգրան Ֆարմանյանի վառ հիշատակը հավերժ կմնա բոլորիս սրտերում:

***Դամալայի հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվ***

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Գեղեցիկ, կլորիկ թռչուն: 4.Հովհ.Թումանյանի հեքիաթի հերոս: 11.Հրատարակչություն Երեւանում: 13.Ցոփ ու ... կյանք վարել: 15.Եվրոպական պետություն: 16.Դանիացի ֆիզիկոս Նիլս ...: 17.Նար-Դոսի վիպակներից՝ «Ես եւ ...»: 19.Պարահանդեսային պար: 21.Լեռ Հայաստանի Կոտայքի մարզում: 24.«..., ինչ լավ են սարի վրա» (երգ՝ Թումանյանի բառերով ու երաժշտությամբ): 25.Խոսք ու զրույցի համար հավաքատեղի հին գյուղերում: 27.Բագրատունիների մայրաքաղաքը: 28.Ցուցական դերանուն: 29.Հովհ.Թումանյանի հերոս: 31.Թերակղզի Միջերկրական ծովում: 33.Իրինան՝ մերձավորների շրջանում: 35.Վրաց կինոյի եւ թատրոնի դերասան ... Մախարաձե: 36.Գետ Սիբիրում: 37.«... բարով, Աստված քեզ հետ, Ոտքդ քարին թող չգա» (Ավ.Իսահակյան): 40.Լիճ Արեւմտյան Հայաստանում: 41.Համո Սահյանի ծննդավայր գյուղը: 44.13-րդ դարի երկրորդ կեսի հայ մանրանկարիչ ... Ռոսլին: 46.Հայերենի վերջածանց: 47.Ծովափնյա քաղաք Ռուսաստանում: 49.Կենսատու, կյանք տվող: 50.Աշխարհի «տանիքը»: 51.Հայ գրող ... Արփիարյան: 54.Գրական ստեղծագործության տեսակ: 55.Դեղձից պատրաստված անուշեղեն: 56.Հայոց Արշակունի թագավոր:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Կոմիտասի երգերից: 3.Ե'վ Վեռնոյը, ե'ւ Թրուայան: 5.Հայ մեծանուն մաթեմատիկոս ... Շիրակացի: 6.Հայոց արքայատոհմ: 7.Հայ ֆիդայի: 8.Քաղաք Ռուսաստանում: 9.Եկեղեցու բակը: 10.Ձի նստելու համար ոտքի հարմարանք: 12.Անձնական դերանուն: 14.Հենրիկ Սենկեւիչի ստեղծագործությունը՝ «... երթաս»: 18.Ռեստորան Թբիլիսիում: 20.Ետադաս կապ: 22.Շիրվանզադեի հերոսուհի: 23.Լվացքի միջոց: 24.Քաղաք Կիլիկիայում: 26.«...ն տվեց ինձ յուր քնարը» (Մ.Նալբանդյան): 29.Ռուս մեծ կոմպոզիտոր: 30.Եվրոպական պետություն: 32.«... դառ, ..., իգիթ, ... դառ, անիրավ» (Հովհ.Թումանյան): 34.Գ.Էմինի գովերգած գյուղը: 38.Վրաց թագուհի: 39.Վրացական գինի: 42.Առարկայի հատկանիշ: 43.Ժամանակի միավոր: 44.Լեռ Իսրայելում: 45.Վրաց նախկին նախագահ Մ.Սաակաշվիլու կինը: 48.Նշանավոր ֆիզիկոս Անդրե Մարի ...: 50.Հայկական առաջին ձայնային ֆիլմը: 51.Մաշտոցյան այբուբենի գինվոր: 52.Ծովային կենդանի: 53.Տղամարդու երգչախումբ:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Աբովյան: 7.Մարգո: 8.Գեշ: 9.Բալետ: 12.Ածելի: 17.Նժար: 18.Քառակուսի: 21.Թոմաս: 22.Կաղամբ: 27.Տապար: 28.Ապագա: 31.Ուֆա: 32.Ալիկ: 33.Մկրատ: 36.Վկա: 38.Ոսկի: 40.Ասուն: 43.Դմակ: 45.Սոնի: 46.Խեկ: 48.Գող: 49.Դիմախաղ: 51.Վեգա: 53.Կենաց: 54.Միկա: 55.Ամ: 56.Տիրան: 57.Խալի:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Բոյլ: 2.Գյուտ: 3.Անգղ: 4.Ջրվեժ: 5.Մոխիր: 10.Աղաթ: 11.Երամ: 13.Ծնծղա: 14.Լայմա: 15.Ռուս: 16.Պիկ: 19.Ռոյալ: 20.Կազակ: 23.Ատամ: 24.Ապար: 25.Բրատ: 26.Ծունկ: 29.Պարս: 30.Գիվի: 34.Կվաս: 35.Առուն: 36.Վիմ: 37.Անկողին: 39.Կրկին: 41.Սոսե: 42.Նիզամի: 43.Դրացի: 44.Ազամա: 47.Եղեմ: 50.Մատ: 51.Վախ: 52.Գալ:


Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445